

Մ.Թ. ՆԱԶԱՐՅԱՆ

**ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՐԴԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԵՎ ՌԻՍԱՆՈՂԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ
(Վանաձոր)**

Դիտարկվում է արդիտեխնոլոգիաների կիրառումը ուսուցման գործընթացում, որը թույլ կտա բարձրացնել դասավանդման արդյունավետությունը: Ներկայացված է առարկաների ուսումնասիրման համար Web կայք, որտեղ տեղադրված են բոլոր անհրաժեշտ նյութերը, ինչը հնարավորություն կտա ուսանողին, օգտվելով կայքում տեղադրված նյութերից, ավելի արդյունավետ դարձնելու ուսուցման գործընթացը: Ուսումնամեթոդաբանության մեջ կարևորվում է ուսուցման թիմային աշխատանքը, ուսանողի անհատական աշխատանքի կազմակերպումը:

Առանցքային բառեր. բարձրագույն կրթություն, ուսուցման գործընթաց, տեղեկատվական էլեկտրոնային գործիքներ, քեյս փաթեթներ, Web կայք,թիմային աշխատանք, ուսուցման անհատական աշխատանք, արդյունավետ ուսուցում, ուսուցման որակ:

Ներածություն: Ուսուցման ինտերակտիվ մեթոդների ներդրումը ենթադրում է ուսումնական գործընթացի բոլոր բաղադրիչների համալիր բարեփոխում, որոնք են. ինքնուրույն աշխատանք, անհատական ուսուցում, դասախոսություններ, լաբորատոր և գործնական աշխատանքներ: Կրթական տեխնոլոգիաների նկատմամբ տարբեր մոտեցումները դիտարկվում են որպես ուսումնական ծրագրի իրականացման համախումբ, որը ներկայացնում է ուսուցման ձևերի, մեթոդների և միջոցների այնպիսի կառուցվածք, որն ապահովում է կրթական վերջնանպատակի իրագործումը:

Խնդրի դրվածքը և հիմնավորումը:Տեղեկատվական միջավայրը նպաստում է ուսուցման նորագույն մեթոդների զարգացմանը, հնարավորություն է տալիս ներազդել տեղեկատվության ընկալման օրգանների վրա, այդպիսով ստեղծելով առավել արդյունավետ ուսուցման միջավայր: Ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման մեթոդաբանության մեջ կարևորվում է ուսանողի անհատական աշխատանքը: ՏՏ-ի կիրառումը բնորոշում է ուսանողի ինքնուրույն աշխատանքի աստիճանը, իսկ զանգվածային համակարգչայինացումը կհանգեցնի ինքնուրույն աշխատանքի ավելի մեծ շեշտադրմանը[1]:

Հետազոտության արդյունքները: Ուսուցման ինտերակտիվ մեթոդների ներդրման միջոցով ուսումնական գործընթացի բաղադրիչների համալիր բարեփոխման քայլ է արվել: Մշակվել են մի շարք էլեկտրոնային դասախոսությունների փաթեթներ: Ներկայացված է նաև դասախոսությունների տեսաձայնագրություն [2, 3]:

Պետք է առանձնացնել նաև մայրենի լեզվով ուսումնամեթոդական գրականության ստեղծման գործընթացը, որը առարկաների ուսուցման ամբողջական էլեկտրոնային փաթեթների ստեղծման հիմքն է:

Ուսուցման արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտություն առաջացավ վերանայել առարկաների ուսումնասիրման մեթոդաբանությունը: Այդ նպատակով հրատարակվեց ուսումնական ձեռնարկ, որը ուղղորդում է ուսանողին առարկայի յուրաքանչյուր թեմայի ուսումնասիրությունն իրականացնել համակարգված՝ առավել ուշադրություն դարձնելով թեմայի համապատասխան բաժիններին, անհատապես կազմակերպելու ուսուցման գործընթացը [4]:

Հեղինակի կողմից 2019 թվականին ներկայացվել են «Տեխնոլոգիական մեքենաներ և սարքավորումներ», «Մետաղների կտրում և կտրող գործիքներ» առարկաների համար անհրաժեշտ էլեկտրոնային նյութերը:

Անհրաժեշտ է արձանագրել, որ նշված առարկաների ուսումնասիրման համար անհրաժեշտ բոլոր նյութերի էլեկտրոնային փաթեթը տեղադրված է ՀԱՊՀ կայքում, ինչը հնարավորություն է տալիս ուսանողին՝ ազատ օգտվելու տեղակայված անհրաժեշտ նյութերից [5, 6]:



Նկ. 1. Web կայք mikayelnajaryan.com

Կայքի էլեկտրոնային հասցեն է՝
<https://polytech.am/onlinelectures/eldas1/>
<https://polytech.am/onlinelectures/eldas2/>

2021 թվականին անհրաժեշտություն առաջացավ հեղինակի բոլոր ուսումնամեթոդական նյութերը միավորել և ավելի հասանելի դարձնել ուսանողին: Այդ նպատակով ստեղծվել է Web կայք mikayelnajaryan.com հասցեով (նկ. 1) [7]:

Նշված առարկաների դասավանդման համար էլեկտրոնային քեյս փաթեթները տեղադրված են Web կայքում: Այն հնարավորություն է տալիս ուսանողին հեշտությամբ գտնել դասավանդվող առարկայի համար անհրաժեշտ էլեկտրոնային նյութերը՝ խնայելով ժամանակը: Այսինքն՝ կայքը այն հարթակն է, ինչը հնարավորություն է տալիս ուսանողին՝ գտնելու ուսուցման համար անհրաժեշտ նյութերը:

Web կայքում տեղադրված քեյս փաթեթները իրենց կառուցվածքով գրեթե նույնն են. դրանք կազմված են այնպիսի մեթոդաբանությամբ, որ ուսանողը արագ կարող է կողմնորոշվել անհրաժեշտ նյութերն ընտրելիս:

Կայքում տեղադրված է նաև մեկ առարկայի էլեկտրոնային դասախոսությունների տեսաձայնագրությունը: Այն ներառում է դասախոսի ուղերձը ուսանողին՝ առարկայի նպատակի, ուսումնասիրվող թեմաների կարևորության և կիրառման բնագավառի, ինչպես նաև դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողի կողմից դրա կիրառման ոլորտի մասին: Բերված են ըստ առարկայական ծրագրի թեմաների դասախոսությունների տեսաձայնագրությունները, հեղինակի մասին համառոտ տեղեկություններ և նրա հետ կապի էլեկտրոնային հասցեն:

Web կայքում տեղադրված «Այլ նյութեր» մոդուլում ուսանողին տրվում է հաճախ օգտագործվող տերմինների թարգմանությունը հայերենից՝ ռուսերեն և անգլերեն լեզուներով, բացատրական բառարան՝ հաճախակի օգտագործվող տերմինների համառոտագիր, դասավանդող դասախոսի մայրենի լեզվով հրատարակած ուսումնամեթոդական գրականության ցանկը, թիմային աշխատանքի կազմակերպման տարիների փորձի արդյունքները, դասախոսի աշխատանքային կենսագրությունը, ինչը, մեր կարծիքով, ևս կարևոր է:

Մեթոդաբանական առումով, կարծում ենք, ուսանողի անհատական աշխատանքի կազմակերպումը կարևոր բաղադրիչ է: Ուսանողների անհատական աշխատանքների կազմակերպման օրինակներից հստակ երևում է նրանց գիտելիքների ձեռքբերման թիմային աշխատանքի մեթոդի արդյունավետությունը: Այստեղ ուսանողը, ծանոթանալով բարձր կուրսերի ուսանողների կողմից արձանագրված հաջողություններին, ձգտում է իրեն տեսնել թիմի կազմում: Այն իրականացնելու համար պահանջվում է մոտիվացնել ուսանողին՝ ներգրավելու նրան թիմային աշխատանքներում: Ուսուցման այս մեթոդը կազմված է այնպես, որ ուսանողների հետազոտական աշխատանքների արդյունքները ներառվում են նրանց ավարտական աշխատանքներում և մագիստրոսական թեզերում:

Արձանագրված է, որ ուսանողների թիմային աշխատանքի արդյունքները բավականին բարձր են՝ որակյալ և ըստ նշանակության մասնագետի պատրաստման, համագործակցության ընդլայնման հնարավորությունների, ուսանողների տեսական, գիտական և հատկապես գործնական գիտելիքների կուտակման առումով: Այս ամենը, անշուշտ, նպաստում է վաղվա անհատի ձևավորմանը:

Web կայքի առկայությունը հնարավորություն է տալիս՝ մեթոդապես ճիշտ կազմակերպելու ուսուցման գործընթացը: Դրա մեջ տեղադրված առանձին մոդուլների օգտագործումը իր գործիքակազմով նպաստում է ուսանողների ինքնուրույն աշխատելու կարողությունների զարգացմանը, հնարավորություն է տալիս դասախոսին՝ ընդլայնելու ուսանողների գիտելիքների շրջանակը, ինչը, իր հերթին, դրականորեն է ազդում նրանց պատրաստվածության մակարդակի վրա:

Եզրակացություն.

1. Ինովացիոն կրթական տեխնոլոգիաների խթանումը, միջավայրի ձևավորումը առանձնակի կարևորություն ունեցող խնդիրներ են բուհի համար՝ պայմանավորված գիտամանկավարժական և գիտատեխնոլոգիական ներուժի նպատակային զարգացմամբ ու արդյունավետ օգտագործմամբ:

2. Web կայքի առկայությունը հնարավորություն է տալիս՝ մեթոդապես ճիշտ կազմակերպելու ուսուցման գործընթացը: Այն նպաստում է ուսանողների ինքնուրույն աշխատելու կարողությունների զարգացմանը, հնարավորություն է տալիս դասախոսին՝ ընդլայնելու ուսանողների գիտելիքների շրջանակը, ինչը, իր հերթին, դրականորեն է ազդում նրանց պատրաստվածության մակարդակի վրա:

3. Ուսանողների թիմային աշխատանքի արդյունքները բավականին բարձր են՝ որակյալ և ըստ նշանակության մասնագետի պատրաստման, համագործակցության ընդլայնման հնարավորությունների, ուսանողների տեսական, գիտական և հատկապես գործնական գիտելիքների կուտակման առումով: Այս ամենը, անշուշտ, նպաստում է վաղվա անհատի ձևավորման գործընթացին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Шапиева Э.П.** Информационные технологии в образовательном процессе современного вуза // Научно-методический электронный журнал «Концепт». - 2016.
2. **Наджарян М.Т., Меликсетян Н.Г.** Внедрение современных технологий обучения в Национальном политехническом университете Армении //Новые технологии высшей школы: Материалы Всероссийской научно-практической конференции «Наука – Общество – Технологии – 2021» (Россия, Москва, 26 марта 2021 года). – 2021. – С. 256-259.
3. **Նաջարյան Մ.Թ.** Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը բարձրագույն կրթության ոլորտում /Լրաբեր.Երևան:- 2020:

4. Նաջարյան Մ.Թ. Տեխնոլոգիական մեթոդներ և սարքավորումներ, Մետաղների կտրում և կտրողործիքներ. Ուսումնական ձեռնարկ.-Երևան: Ճարտարագետ, 2019.- 168 էջ:
5. <https://polytech.am/onlinelectures/eldas1/>
6. <https://polytech.am/onlinelectures/eldas2/>
7. mikayelnajaryan.com

Մ.Տ. ՆԱԺՋԱՐՅԱՆ

**ПРИМЕНЕНИЕ СОВРЕМЕННЫХ ТЕХНОЛОГИЙ ПРЕПОДАВАНИЯ
И ПРОБЛЕМЫ ОРГАНИЗАЦИИ ИНДИВИДУАЛЬНОЙ РАБОТЫ
СТУДЕНТА**

Рассматривается применение современных технологий в процессе обучения, позволяющих улучшить эффективность преподавания. Предложен Web-сайт со всеми необходимыми ресурсами для изучения предметов, что даст возможность студенту воспользоваться материалами с Web-сайта и сделать процесс обучения более эффективным. В методологии обучения важна организация групповой и индивидуальной работы.

Ключевые слова: высшее образование, процесс обучения, электронные информационные инструменты, кейс пакеты, Web-сайт, групповая работа, индивидуальная работа в обучении, эффективное обучение, качество обучения.

M.T. NAJARYAN

**APPLYING MODERN TEACHING TECHNOLOGIES AND PROBLEMS
OF ORGANIZING THE STUDENT'S INDIVIDUAL WORK**

The application of modern technologies in the educational process are considered, which will allow to increase the teaching efficiency. A website with all required resources to study the courses is presented, which will allow the student to learn more efficiently. Teamwork and individual work is emphasized in the education methodology.

Keywords: higher education, education process, digital information tools, case packages, website, teamwork, individual education work, efficient education, education quality.